103. Յարևմտակողմն Մակուայ և յելից Պայեզիտոյ կայ ՕՎԱՃԸԿ վիճակ, որոյ գլխաւոր տեղի է Քիլիսէքէնտ աւան. յորոյ հիւսիսոյ՝ յԱլաթաղ լերին անցք են կարավանի յ՚7240՛ բարձու, երթալով ՚ի Պայէզիտ կամ ՚ի Խոյ: — Յելից նորա և ՚ի հարաւոյ Մակուայ և Պալըք գետոյ՝ կան ԱՊԱՃԱ և ՉԱԼՏԸՐԱՆ վիճակք, և ՚ի հարաւոյ նոցա յելից Օվաճըկայ և ՚ի մտից Երասխայ՝ ԳԱՐԱԳՕՅՈՒՆԼՈՒ վիճակ, յերկրին ՎԸՐՆՋՈՒՆՆԵԱՑ, յորում գլխաւոր տեղիք նշանակին Գարաֆօյման և Մէշուր կամ Մէշխուր. և խոնարհագոյն ՚ի հիւսիսոյ Շէրէֆխանէ լերանց՝ Գէրան գիւղ որ Թուի Աղափ Գիրան ժառանգութիւն սրբոյն Վահանայ Գողթնացւոյ: — Զհարաւով լերանցս պատի Աք-չայ գետ յարևմտից եկեալ ՚ի սահմանաց օսմանեան մասին և ընթացեալ յելս՝ Թափի յԵրասխ մերձ ՚ի Հին Ջուղա. ընդունելով խառն մի յառաջ զՔօտուր (20) գետ, որ ՚ի հարաւոյ գայ նովին ընթացիւք անցանելով ընդ Խոյ. ՚ի միջի երկոցուն գետոցս յարևմտից կայ ՍԷԿՄԱՆԱԳԱՏ կամ Սէօքմէնաբադ վիճակ, որ պատշաճի ՄԱՐԳԱՍՏԱՆ և ՏՐԳԱՏՈՒՆՈՒՔ գաւառաց հնոց. և յարևելից ՉՈՐՍ վիճակ համանուն բերդաւանաւ, որ է հին վիճակն և գաւառն ՀԱՑՈՒՆԵԱՑ, ուր Բիւրեղ տիկին Սիւնեաց ել ընծայիւք ընդ առաջ Հերակլի կայսեր, և խնդրեալ էառ ՚ի նմանէ մասն ՚ի կենարար փայտէն, մինչդեռ դարձուցանէր զայն ՚ի գերութենէն Պարսից, և կանգնեաց եկեղեցի մեծ ՚ի հանգիստ խաչին: — Ի հարաւոյ Սէկմանապատայ կայ ՔՈԴՈՒՐ վիճակ յԸՆՉԱՀԻՑ-ՁՈՐ գաւառի հնում, որ և ԸՆՉԱՀԻՑ-ՁՈՐ, և գլխաւոր տեղին աւանն Քօտուր է բերդն ԿՈՏՈՐոյ առ համանուն գետով, ուր մեռաւ Ստեփաննոս Գ. կաթ. յամին 971:

104. Յելից Կոտորոյ և ՚ի հարաւոյ Չորսայ կայ գաւառն ԽՈՅ, ՚ի հարաւոյ կողմանէ մինչև ՚ի հիւսիսակողմն ծովուն Որմիոյ, և յարևելից գետով օժանդակաւ Կոտորոյ՝ բաժանեալ ՚ի Մարանդ գաւառէ. հիւսիսակողմն երկրին պատշաճի ԹՈՌՆԱՒԱՆ գաւառի հնոյ, հարաւակողմն ՀԵՐ գաւառի աշխարհին ՊԱՐՍԿԱՀԱՅՈՑ. և ինքն ԽՈՅ քաղաք որ աթոռ է խանի և գլուխ բազում վիճակաց, նոյն ինքն է ՀԵՐ քաղաք, ուր նստէր ոստիկան Արաբացի յաւուրս և յետ Բագրատունեաց: Ընդարձակ է քաղաքն ՚ի հիւսիսոյ գետոյն՝ որ և յիւր անուն կոչի, ալեւաւերտ այլ վայելուչ տամբք, լայն փողոցիւք և ծառաստանօք. ձանապարհք արքունիք ձգին ՚ի չորից ծագաց նորին յԱտրպատական և յօսմանեան և ՚ի ռուսական Հայս: Բնակիչք 20-25,000. յորս գոն և հարիւրաւոր երդք Հայոց: Սահմանք Խոյի կարի բարեբերք են և բարգաւաճ: Զերկաթի դուռն քաղաքիս եհերձ պողովատիկ ռուսերուն քաջն Ալլահվերդի Հանունի, հալածելով զոստիկանն, և ապրեցուցանելով զարքայն Արծրունեաց, զոր յառաջ մատնեալն էր առ քինու. (112 ՚ի ծանօթ):

105. Յելից Խոյի և ՚ի հարաւոյ Երասխայ, ՚ի հիւսիսոյ ելից Որմիոյ ծովուն՝ կայ ՄԱՐԱՆԴ գաւառ, որոյ հիւսիսակողմն առ Երասխաւ էր ՃՈՒԱՇ կամ ՃՈՒԱՇՌՈՏ և հարաւակողմն ՄԱՐԱՆԴ, գաւառք Վասպուրականի, ընդ որ խաղայ Սօղան կամ Զունուն գետ խառնեալ ՚ի գետն Խոյի. և առ նովաւ կայ ՄԱՐԱՆԴ կամ ՄԷՐԷՆՏ քաղաք ՚ի հարաւակողմն վիճակին, ՚ի բարձու 4300՛, ունելով բերդ ՚ի հարաւոյ. ըստ աւանդութեան Հայոց և բնակչաց քաղաքին՝ աստ Թաղեալ է կին Նոյի Նոյեմզարա, վասն որոյ և Մայր-անդ կոչի, և ՚ի մզկիթի ուրեմն ասեն լինել զգերեզման նորա: Աստ Թաղեալ են և Ալփարսլան և Մէլիքշահ ըստ մերոց պատմչաց: Բնակիչք 1000 տուն մահմետականք: Գեօղք բազումք են Մարանդայ բարգաւաճք և զուարճատեսք. ՚ի հիւսիսակողմն կայ Զունուս բերդաւան. և յարևմտից հիւսիսոյ նորա Դաշարջան գեօղ ՚ի մնարս Քօահի Նշան լերին. յորոյ հիւսիսոյ Քէրէէր աւան մերձ յԵրասխ, և կամուրջ ՚ի վերայ գետակի առ նովաւ. յելից նորա հուպ ՚ի խառնուրդս Աքչայ և Քօդուր գետոց Մաաախան գիւղ, որ ձմերոց էր Թագաւորացն Արծրունեաց, և Գագկայ արքայի բազում շինութիւնս արարեալ ՚ի նմա, և գետն կոչէր Կարմիր. նոյնպէս արար շինուածս և յանձաւն Զօրէ կոչեցեալ մերձ ՚ի Մառական: — Յելից Մարանդայ կայ ՏԻՍՄԷՐ կամ ՏԱՍՄԱՐ վիճակ փոքր առ Երասխաւ, ՚ի մտից Գարատաղ նահանգի. և աւան համանուն հուպ յԵրասխ ՚ի հարաւոյ Որդուատայ:

106. Ի մտից Խոյ գաւառի և ՚ի հարաւոյ Քոդուրայ, յելից օսմանեան սահմանին և ՚ի մտից հիւսիսոյ ծովուն Որմիոյ, կայ ՍԱԼԱՄԱՍ կամ ՏԻԼՄԱՆ գաւառ, որ է ԶԱՐԵՀԱՒԱՆԴ գաւառ Պարսկահայոց. և քաղաք նորա ՏԻԼՄԱՆ իբր չորիւք ժամուք հեռի կայ ՚ի ծովէն, կաւակերտ տամբք և պարսպօք, կարի բարգաւաճ վաճառաշահութեամբ և անցք կարավանաց. բնակիչքն մահմետականք իբրև 800 տունք: Ի մտից հարաւոյ քաղաքին կան աւերակք հնոյ ՍԱՂԱՄԱՍՏ քաղաքի որ և Սալմաս անուն յիշի անդստին ՚ի Դ. դարէ և Կորճէից նահանգի ասի վիճակեալ. աթոռ էր եպիսկոպոսի ԴՐԱՆՆ ՊԱՐՍԻՑ. յաւերակսն երևին աշտարակք բոլորշիք և արաբացի արձանք: Աւան նոր առ նմին կառուցեալ և բնակեալ է ՚ի Քաղդէացւոց, ՚ի Հայոց և ՚ի մահմետականաց: Ի մերձակայ լերինս Սալամաստայ գտանին պատկերք Սասանեան արքայից քանդակեալք ՚ի վէմս: Ի հարաւոյ Սալամաստայ կայ Խօսրովա աւան աթոռ նեստորական եպիսկոպոսի. մի ՚ի գլխաւոր գիւղից վիճակին է և Ճամալաւա կամ Եամալաւա: Հայոց վիճակիս գաղթեալ ՚ի Ռուսս՝ մնան աստ իբրև 400 տունք եւեթ: — Արևմտեան հարաւային ծայր Սալամաստայ ՉԱՐԻ կոչի, վիճակ փոքր, ընդ որ խաղայ գետ համանուն և Թափի ՚ի ծովն ՚ի հիւսիսոյ կողմանէ:

107. Ամենայն արևմտակողմն ծովուն ցահմանս Օսմանեանց վիճակեալ է ՈՐՄԻԱ կամ ՈՒՐՈՒՄԻԷ գաւառի, յանուն ծովուն մանաւանդ Թէ քաղաքին գլխաւորի, որ սակաւ ժամուք հեռի է ՚ի ծովէն ՚ի միջավայրս արևմտակողման նորուն առ Շահէր կամ Սօփօսը գետով. ՈՐՄԻ՝ քաղաք Հայոց կոչի միշտ առ նախնիս մեր, յայտ է Թէ ՚ի Պարսկահայս, այլ բնիկ գաւառ նորա ոչ յիշի. համարի հայրենիք Զրադաշտայ առաջնորդի զանդիկ կրօնից, որ եկեաց առ մեծով հայկազն Տիգրանաւ. իսկ ՚ի փրկչական դարուն